

«Ü B E R D I E K R A F T»

ՄԵՐ ՈՒԺԻՑ ՎԵՐ

Դրամա երկու գործողութեամբ

Բեօքնստէյրնէ Բեօքնսօնի

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Պաստօր Աղօլֆ Զանդ  
Կարա նորա կինը  
Ելիաս { նոցա որդիքը  
Ռահիլ {  
Աննա Ռոբերտս Կարայի քոյը  
Եպիսկոպոս  
Կրօյէր {  
Բրատտ {  
Բլանկ { պաստօրներ  
Բրայ {  
Ինգէն {  
Ֆալկ {  
Այրի տիրուհին  
Ագաթիա Ֆլորվոդէն  
Անժանօթ (ինքը պաստօր Բրատտը)  
Ժողովուրդ

## Գործող անժանց Նկարագրութիւնը

(Նեղինակի անձնական հսկողութեան ժամանակ Խրիստի-նիայում առաջին անգամ ներկայացնելիս եղել են)։

**ԶԱՆԴԻ** սրտաբաց տղամարդ. շարժուածքն եռանդուն, յստա-կամիտ, առողջ, հաւատարմասիրտ, ինչպէս նաւաստինե-րին է յատուկ. տղատ ամեն մի կրեից և դիւրագրգիռ լինելուց։

**ԿԱՐՄԱՆ**. անկողնում պարկած. իւր շարժուածքների ժամանակ ջղային և կենդանի: Բարձի տեղը շարունակ փոխում է. որի ժամանակ քոյրն երբեմն երբեմն օգնում է: Բայց այն բովէից, երբ հօր և որդոց մէջ խօսակցութիւն է տեղի ունենում, հանդիսատ է պառկած և միայն աշքերով նոցա հետեւում է: Նորա նայուածքն այնպէս է, որ կար-ծես գալիք բաները նախագուշակում է և երկիւղ է կրում այն բոլորից, որ կարող է տեղի ունենալ:

**ԵԼԻԱՍ** ԵՒ ՌԱՀԻԼ, այնպէս են մեծացել-դաստիարակուել, որ միշտ մի տեսակ դրդում են զգում իրար ձեռք ըըռ-ներ: Երբ ելիասը խօսում է, քոյրը նայում է նորան և ընդհակառակը. մնացած ժամանակներին իրանց ծնողնե-րին են նայում: Որդոց և ծնողների նայուածքն արտա-յայտում է մի տեսակ փոխադարձ վստահութիւն և մտե-րիմ յարաբերութիւն, հետևանք՝ այնտեղ մենակութեան մէջ իրար հետ սերտ ապրելու: Ելիասը կրքոտ և զգայուն է, ոչ մի նշոյլ լալկանութեան:

**ԱՅՐԻ** ՏԻՄՈՒՀԻՆ խորին մեծարանաց արժանի պատկառելի պառաւ կին:

**ԵԳԻՒԿՈՊ**. ԵՒ ՊԱՍՏՈՐՆԵՐԸ նոցանից ոչ մէկն անհեթեթ չէ: Հանդարտ ներս են մտնում. իրանց շարժուածքներն և վարմունքը բնական և հասարակ. երբ ներս են մտնում, առանձին հետաքրքրութեամբ և կասկածանքով նայում են այս ու այն կողմը այն տան, որի մասին այնքան խօ-սուել է. այդ տեսարանը մի տեսակ ծիծաղելի տպա-ւորութիւն է թողնում: Բայց երբ սկսում են խօսքին անցնել, այդ դրութիւնը դադարում է:

## ՄԵՐ ՈՒԺԻՑ ՎԵՐ

Դրամա երկու գործողութեամբ

## ԱՌԱՋԻՆ ԴՈՐՄՈՂՈՒԹԻՒՆ

Գերաններից շինուած պատերով սենեակ։ Համեստ կա.  
հաւորուած։ ազ կողմից երկու պատուհան։ ձախ կողմից մի  
դռւա։ դէպի ձախ դրուած է մի մահճակալ, որի գլխակողմը  
դէպի դռւան է ուղղուած։ Մահճակալի մօտ դանւում է մի  
փոքրիկ սեղան, որի վերայ դանւում են դեղի շշիկներ և բա-  
ժակներ։ Մէկ դարակ, աթոռներ և այլ կաչ կարասիք։

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼ

Անկողնում Կլարա Զանդը վերայից սպիտակ վերմակ  
ծածկած, պարկած է, Պատուհաններից մէկի մօտ կանգնած է  
նորա քոյրը՝ տիկին Աննա Ռոքերասը։

Տիկին Աննա Ռոքերտոս։ Որպէս գեղեցիկ է արեգակը  
լուսաւորում սպիտակ ցառասին (Rickenbaum) և ինչպէս նուրբ  
են այստեղ տերենները։

Տիրունի Կլարա Զանդ։ Բայց այս հոտը բեկտենիի  
հոտն է, որ գալիս է։

Աննա։ Բայց ես այստեղ բեկտենի ծառ չեմ տեսնում։  
Կլարա։ Դու այդտեղից չես կարող տեսնել. Բայց նորա  
հոտը գալիս է. առաւօտեան զեփիւոը այդ բուրմունքն ուղիղ  
դէպի մեղ է բերում։

Աննա։ Խոկ ես բոլորովին հոտ չեմ զգում։  
Կլարա. Օ՛հ, այսքան երկար անձրկից յետոյ ամենաչըն-  
չին շնչումն անգամ ես զգում եմ։

Աննա։ Խսկապէս դու բեկտենիի հոտ զգում ես։

Կլարա. Եւ ինչպէս պաղզ։ Բայց խնդրում եմ ներքին պատուհանը փակել։

Աննա. Ինչպէս կուզես։ (Պատուհանը փակում է)։

Կլարա. Այս ով էր, որ քեզ ասել է, թէ սարի հեղեղից մենք մեզ պէտք է պատրաստ պահենք։

Աննա. Այս ծերունի նաւակավարը, որ մեզ այստեղ բեռնեց։ Անձրի էր գալիս, և նա ասում էր, որ այսպիսի տևող անձրեները վտանգաւոր են, որովհետև սարերից հեղեղ են առաջացնում։

Կլարա. Ամբողջ գիշեր այլ բանի մասին էլ չեմ մտածել։ Դու դիտե՞ս, որ այստեղ երբեմն երբեմն սարերից հեղեղներ են թափւում։ Մեր այստեղ գալուց առաջ, այդպիսի մի հեղեղ եկեղեցին տարել է։

Աննա. Եկեղեցին։

Կլարա. Ոչ այժմեան. առաջ եկեղեցին աւելի հեռու էր գտնւում։

Աննա. Ուրեմն այդ է պատճառն, որ այժմեան եկեղեցին այնքան մօտ է այդու պատնէշին։

Կլարա. Այս։ Ամառը, երբ լուսամուտի շրջանակները պերցրած են լինում, ես առանց տեղիցս շարժուելու լսում եմ Սադօֆի ձայնը, երբ նա բեմում երգում է. Հասկանալի է, որ երբ զուռք և պատուհանները բաց են։ Նա շատ գեղեցիկ է երգում։ Իսկ երբ երկու դռներն էլ բաց են մնում, այն ժամանակ ես կտրողանում եմ եկեղեցու ներսը տեսնել։ Արի այստեղ։ Հէնց այդ պատճառով անկողնակալս այսպէս է դրուած։

Աննա. (ծոտենալով) Ա՛խ Կլարա, միթէ քեզ կրկին այդպէս պէտք է տեսնէի։

Կլարա. Աննա։

Աննա. Ինչու չէիր ինձ գրում։

Կլարա. Նախ, որ Ամերիկան շատ հեռու է ինչպէս գիտես։ և երկրորդ—բայց այս մասին մի ուրիշ անդամ։

Աննա. Երեկ, երբ քեզ բժշկի մասին հարցորի, քո տուած պատասխանը չհասկացայ։

Կլարա. Որովհետեւ Աղօլֆը մեզ մօտ էր. իսկ ես նրա ներկայութեամբ խուսափեցի պատասխանել։ Մենք այլև բըժիշկ չունենք։

Աննա. Դուք այլս բժիշկ չունէք։

Կլարա. Նա շարունակ այցելում էր... ինքն էլ այստե-

վեց հեռու է բնակւում—բայց ոչ մի փոփոխութիւն դէպի լաւը: Նև գեռ մի ամբողջ ամիս էլ առանց աչքս փակելու պառկեցի:

**Աննա.** Մի ամբողջ ամիս առանց քնի: Բայց այդ անկարելի է:

**Կլարա.** Շուտով կլրանայ կէս տարին: Նթէ բժիշկը յաճախած էլ լինէր, դարձեալ այսպէս կինէի. այդպէս չէ Աննա: Ամուսինս մի անգամ նրան հարցրեց, թէ իսկապէս ինչ է իմ հիւանդութիւնը: Բժիշկն իմ հիւանդութեանը մի զղուելի անուն տուեց: Բայց Աղօլֆն ինձ չասաց և ինքս էլ չգիտեմ: Այդ ժամանակից յետոյ մենք բժիշկի ետևից չենք ուղարկել:

**Աննա.** Երբեմն դու շատ չես խօսում:

**Կլարա.** Պատահում է, որ ամբողջ օրը ոչինչ չեմ խօսում. բայց յետոյ այնքան եմ խօսում, որ ինքս ինձ չեմ կարողանում զապել: Աղօլֆս էլ հիմա շուտով առաւտօնեան իւր սովորական զրօսանքից տուն կվերադառնայ և ինձ համար ծաղիկներ կբերի:

**Աննա.** Նթէ այդքան սիրում ես, գնամ մի քանի հատ պլոկեմ բերեմ:

**Կլարա.** Ա՞յս ոչ, նոցա մէջ կան ծաղիկներ, որ ես տեսանել անգամ չեմ ուզում, իսկ նա այդ ծաղիկները ճանաչում է:

Բայց դու չպատմեցիր, Աննա, թէ ինչպէս հանդիպեցար իմ երեխանցը նաւի վերայ: Շատ ցանկանում եմ այդ մասին լսել:

**Աննա.** Երեկ այստեղ այնպէս անհանդիսատ էր:

**Կլարա.** Եւ բոլորդ էլ դադրած էիք: Հէնց մտածիր, որ երեխայքը դեռ քնած են. Ժամը 7-ից մինչև 7-ը: Հէնց սա է երիտասարդութիւնը:

**Աննա.** Նրանց այդ էլ հարկաւոր է: Իսկ ես, բաւական է որ սի երկու ժամ անընդհատ քնեմ, և այլևս յոզնածութիւն չեմ զգալ:

**Կլարա.** Այսպէս է պատահում բոլորի հետ, որոնք ամառուան կարճ գիշերներին այստեղ են լինում: Մարդս այնպէս յուզուած է լինում: Բայց երեխայքը չէ որ նոքա սիրելի արարածներ են:

**Աննա.** Եւ որքան էլ անմեղ: Բայց նոքա ոչ քեզ նման են և ոչ էլ Զանգին բացի աչքերից, որ ես ուշ նկատեցի:

**Կլարա.** Ա՞յս պատմիր, պատմիր:

**Աննա.** Եթէ նոքա ձեղանից մէկին նման լինէին, ես իսկոյն կճանաչէի: Բայց ձեզ էլ երեխայ ժամանակից յետոյ չեմ տեսել: պէտք է որ յլիւս: Նև նոցա նախ և առաջ նաւ մտնելիս տեսայ: և յետոյ էլ նաւում, թէպէտ նոքա երկրորդ կարգով էին գնում...

**Կլարա.** Միջոցները թոյլ չեն սալիս խեղճերին առաջին կարգով գնալ:

**Աննա.** Սկզբում նոցա իսկապէս չճանաչեցի: Բայց մի առաւօտ, երբ ես իերեր տախտակամածի վերայ կանգնած էի, տեսայ նոցա թէ ինչպէս ներքեում աշխոյժով գնում գալիս էին: Ամեն անգամ շուր գալիս, տեսնում էի աչքերը, որ չէի կարող մոռանալ, որովհետև ինձ թւում էր, որ այդ աչքերն ինձ ծանօթ են Ծովային խոչունները նոցա այնքան մօտ էին թռչելով անցնում, որ Ռահիլը վախից սկսում էր ձեռքերով պաշապանուել, որովհետև համարեա թէ նորա ականջներում էին ճշում: Ձեռքերի այդ շարժումները բոլորովին քոնն էին:

**Կլարա.** Խոկոյն գնացիր նոցա մօտ:

**Աննա.** Եւ հարցնում էլ ես: «Ձեր ազգանունը Զանդ է», հարցըրի ես նրանց. պատասխանի կարիք չկար. ես այդ պարզ տեսնում էի: «Ես Ամերիկայի ձեր մօրաքոյր Աննան եմ» աւելացըրի ես: Եւ երեքս էլ մի տեսակ շարժուեցինք: (Երկու քոյրերն էլ լազ են լինում):

**Կլարա.** Ռահիլը գըել և խնդրել է, որ ինք մօտ գաս, այդպէս չէ Աննա:

**Աննա.** Այս. և դորա համար Ռահիլից եմ շնորհակալ: Որքան նա բարի է: Ի հարկէ նոցա իսկոյն առաջին կարգը տեղափոխեցի: Ռահիլին տուի զլիսի ծածկոց, որովհետև մըսում էր, իսկ ելիասին պէտ:

**Կլարա.** Եմ բարի Աննա:

**Աննա.** Բայց լսիր շարունակութիւնը: — Այդ միջոցին մեր ետևից, ֆիորդի վրայ փչում էր սև հողմը: Մենք ուղղակի բարձր, մերկ կապոյտ ժայռի տակ էինք գտնուում: Ուրոււների խումբը դորա վերայից թռչում էր. իսկ մի քանիսը ճշում էին հենց մեր զլիսալերեր: Միաժամանակ անտանելի ցուրտ էր: Ծովի եզերքին երեսում էին ջուխտ ու կենտ խրճիթներ—միակ խրճիթները, որ մենք մեր կատարած անթիւ մղոնաւոր ճանապարհորդութեան ժամանակ նկատեցինք: Միթէ հիւսիսային

երկիրը բացի ժայռերից և ժայռապատ կղզիներից ուրիշ բան, չունի, մտածում էի ես Այստեղ են մեծացել այս մրսող երեսաները, Եւ այդ երբէք չեմ մոռանալ Ինչ սարսափելի էր Կլարա. Բայց բոլորովին սարսափելի չեմ:

Աննա. Կլարա—ախ, այժմ դռն այդպէս պառկած—յիշում ես թէ ինչպիսի քնքոյշ և ուրախ արարած էիր:

Կլարա. Այն, այն, ես ինքս էլ չգիտեմ, թէ որտեղից պէտք է սկսէի պատմել, որ քեզ ամենայն բան պարզուէրո՞ս տէր իմ Աստուած:

Աննա. Ինչո՞ւ չէիր ինձ գրում, որ գամ, որը ես ուրախութեամբ կը կատարէի և հեշտութեամբ կարող էի օդուակար լինել քեզ՝ քո այդ ուժից վեր աշխատանքի մէջ: Ինչո՞ւ ճշմարտութիւնը չէիր գրում:—Այս բոլորի մասին առաջին անգամ միակ գրողը Ռահին է եղել:

Կլարա. Ճիշտ է, այն,—այդպէս է—այդպէս և պէտք է լինէր:

Աննա. Բայց ինչտւ:

Կլարա. Եթէ ես բոլորի մասին ճշտորէն գրած լինէիր, այն ժամանակ դուք բոլորդ էլ այստեղ կը թափուէիք:—

Իսկ ես օգնութեան կարօտ չեմ, Որովհետև ինձ օգնել անկարելի է:

Աննա. Ուրեմն դու խարում էիր:

Կլարա. Բնական է, ես միշտ խարել եմ... և բոլորին էլ Այլ կերպ չէի կարող:

Աննա. Դորանից խելքս բան չի կտրում:

Կլարա. Աննա, դու խօսում էիր ռուժից վեր աշխատանքից մասին: Դու ասում էիր, որ ինձ հեշտութեամբ օգնել կարող էիր: Երբեմից տեսել ես յօգնած դադրածին, որ ուժ ունենայ օգնութիւն ինդրելու և կամ դիմադրելու:

Աննա. Բայց սկզբո՞ւմ, քանի դեռ այս դրութեան չէիր հասել:

Կլարա. Դու այդ չես հասկանում:

Աննա. Ուրեմն պարզիր, բացատրիր— եթէ կարող ես: Կլարա. Ոչ. մէկ անգամից անկարող եմ—գուցէ հետզհետէ:

Աննա. Որպէս զի սկսեմ, ասեմ. դու չես ունեցել այն հաւատն, ինչ որ Զանգն է ունեցել—որպէս տարօրինակ: Այս չէր պատճառը:

Կլարա. Ո՞չ.—Սա մի երկար պատմութիւն է.—բայց այդ չէ ինչ որ կարծում ես. Մենք երկուսս էլ տարրեր բնութեան մարդիկ ենք—բայց այդ էլ չի պատճառը: Ինձ թւում է —եթէ Զանգն էլ ուրիշ մարդկանց պէս լինէր, աղմուկ հանէր տիրել կամենար—այն ժամանակ նա ևս հոգո չէր ունենալ: Բայց մեր ծանօթութիւնից առաջ նա իւր ամբողջ ուժով—և հաւատա, որ նա իւր մէջ մեծ ոյժ ունի—իւր ամբողջ ոյժով գործին էր նուիրուած: Եւ դորա համար այդ ոյժը սիրոյ և ինքնազոհութեան էր հասցըել. և նրալէս գեղեցիկ և սիրելի էր այդ: Երևակայիր, որ մեր տան մէջ ոչ մի կոպիտ խօսք չի լսուած և ոչ էլ այսպէս ասած ընտանեկան փոթորկներ տեղի են ունեցել: Եւ չուտով չէ կլրանայ մեր ամուսնութեան 25 ամեակը: Զանգը միշտ կիրակնօրեայ ուրախ դէմք ունի: Ամրող տարին նորա համար հէնց կարծես կիրակի է:

Աննա. Ասուուած իմ, որչափ սիրում ես դու նորան:

Կլարա. Շատ թոյլ է արտասանել՝ նորան սիրում եմ ես առանց նրա գոյութիւն չէի ունենալ. և դեռ դիմադրութեան մասին ես խօսում:—Այսինքն պատահում էին ժամանակներ, երբ ուժից անցնում էր:

Աննա. Ինչ ես ուզում ասե՞լ:

Կլարա. Ես կամենում եմ քեզ այդ յետոյ բացատրել: Բայց ովք կարող է կոիւ մղել այնտեղ, որտեղ բացի բարիեց և անձնազոհութիւնից ուրիշ ոչինչ չի տեսնում: Ոչ այլ ինչ և եթէ ոչ ուրախութիւն եւ ովք կարող է դիմադրել, երբ նրա երեխային հաւատն և իւր բնութիւնից վեր ոյժը բոլորին նուանում է:

Աննա. Ասում ես, բնականից վեր:

Կլարա. Դորա մասին դու ոչինչ չես լսել: Միթէ երեխայքը քեզ չեն պատմել—:

Աննա.—Ի՞նչ:

Կլարա. Որ երբ Զանգը հոգով սրտով աղօթում ինդրում է՝ նա ստանում է:

Աննա. Այսինքն, ուզում ես ասել, որ նա հրաշքներ է կատարում:

Կլարա. Այս:

Աննա. Զանգը:

Կլարա. Միթէ երեխայք քեզ այդ չեն ասել:

Աննա. Ո՞չ:

Կլարա. Բայց դա շատ տարօրինակ չէ:

Աննա. Մենք այդպիսի բաներից ոչինչ չենք խօսել:

Կլարա. Ուրեմն այն ժամանակ նոքա ևս ոչինչ...— ինչպէս չէ. հաւանական է, նոքա կարծել են, թէ դու արդէն ամեն բան գիտես: Որովհետեւ Զանդը հրաշագործ քահանայ՝ անուամբ է ամբողջ շրջակաբում ճանաչուած: Նոքա երեխ կարծել են, որ քեզ այդ բոլորը յայտնի կլինի: Բայց դորանից նոքա անշափ ամօթխած և բարի երե-խաներ են:

Աննա. Բայց նա իրօք հրաշքներ է կատարում. իսո-կապէս հրաշքներ:

Կլարա. Միթէ նա քեզ բնականից վեր մարդու տպաւո-րութիւն չթողեց, երբ հէնց նորան տեսամբ:

Աննա. Ճիշտն ասած այդ բանը իմ մաքով չի անցել— բայց հիմա, երբ դու ասացիր—նա իսկապէս թողնում է մի շատ վերին, ինչպէս անուանեմ—մի վերին հոգեսոր ազդե-ցութիւն. Յամենայն դէպս մի շատ ինքնօրինակ. կարծես նա այս աշխարհց չէ:

Կլարա. Ճիշտ չէ:

Աննա. Անտարակոյս:

Կլարա. Դու գիտե՞ս, որ ես շատ անգամ կծկում եմ: Ոտքերս հասնում է կրծքիս, իսկ ձեռքերս դէպի վեր են ձըգ ւում և այդպէս պառկած մնում եմ—ոչ, չեմ համարձակում քո առաջ ցոյց տալ, թէ ինչպէս է կատարւում. որովհետեւ կարող է նորից կրկնուել: Շատ անգամ, նորա բացակայուա թեան ժամանակ, պատահում է, որ ամբողջ օրերով այդ դրու-թեան մէջ եմ մնում և չեմ կարողանում մարմնիս անդամնե-րին իւր նախկին գրութիւնը տալ: Դու կարող ես ինձ հաւա-տալ Ուղղակի սարսափելի է, Մէկ անգամ—նա հէնց սարե-րումն էր—ախ նորա սարերում այդ երկար պատոյտները—ես ամբողջ ութ օր այդ դրութեան մէջ մնացի: ութ օր այդ գրութեան մէջ Բայց հազիւ նա ոտքը շէմքին էր դրել և մենք իրար նայեցինք, իսկոյն ոտքերս և ձեռքերս կծկուե-լուց ազատուեցան: Նա մօտեցաւ ինձ և ձեռքով շօշափեց և ես պառկեցի ուղիղ այնպէս, ինչպէս այժմ տեսնում ես: Եւ այդպէս լինում է միշտ և շարունակ: Բաւական է որ նա ներս մտնի և իմ ցաւին վերջ է լինում:

Աննա. Տարօրինակ:

Կլարա. Բայց ինչ կասես, որ հիւանդները, այսինքն արտանց հաւատացող հիւանդները—երբ նա գնացել է այդ հիւանդների մօտ, նրանց հետ աղօթել, նոքա կրկին առողջացել են—։ Եւ ոչ թէ մի անդամ է պատահել, այլ հարիւրաւոր։

Աննա. Խսկապէս ո՞ղջ և առողջացե՞լ։

Կլարա. Կատարեալ առողջացել։ Պատահել է, որ հիւանդի հեռաւորութեան պատճառով Զանգն անկարող է եղել այցելել նորան, նա գրել է հիւանդին, որ այս ինչ օրն այս ինչ ժամին ինքը նորա համար պէտք է աղօթի և այդ պատճառով նա ևս այդ ժամին թող իւր հետ աղօթի—և հենց այդ ժամից հիւանդի դրութիւնը դէպի լաւն է փոխուել. սա զուտ ճշմարտութիւն է։ Եւ այսպիսի դէպկեր շատ գիտեմ։

Աննա. Զարմանալի է։ Եւ դու այդ մասին ինձ ոչ մի անդամ չես գրել։

Կլարա. Ես ձեզ լաւ եմ ճանաչում։ Սթէ այդպէս վարուեի, արդեօք նորա անձնաւորութիւնը ձեր կասկածանքի չէի ենթարկիլ—Այստեղ կայ մի այրի տիրուհի — պէտք է նրան տեսնաս—նա բոլորովին մեզ մօտ է բնակում և արժանի է ամենայն յարգանաց, որ ես մտածել կարող եմ։ Նա ամբողջ 15 տարի անդամալոյժ էր, երբ Զանգն այստեղ տեղափոխուեց և արդէն 2օ տարի է անցել։ Նա ամեն կիւրակի գնում է եկեղեցի և շրւտով 100 տարեկան կինի։

Աննա. Եւ այդ պառաւին բժշկել է

Կլարա. Միայն իւր և պառաւի աղօթքի շնորհի՛, որ նորա հետ ջերմեռանգութեամբ աղօթում էր։ Խսկ ամենից ուշադրութեան արժանին Ադաթիա Ֆլորիօքէնին բժշկելն է։ Նա գրեթէ մեռած էր։ Զանգը նորա մի ձեռքը վերցրեց իւր ձեռքին, իսկ իւր միւս ձեռքը տարաւ նորա կրծքին և տաքացրեց և աղջիկը նորից շունչ քաշել սկսեց։ Ադաթիան և պառաւ այրի տիրուհին այժմ ապրում են միասին մեզ կից բնակարանում։ Այսպէս պառկած մինչեւ առաւօտ կարող էի քեզ շարունակ պատմել։ Նորանից առաջանում է լրյու և տարածւում այստեղ և հեռուն հազարաւոր հաւատացեալների մէջ, ու չկայ մէկը նորան հաւասար։ Եւ այս տարածուելով տարածւում է։ այնպէս որ մենք հազիւ մի օր հանդիսաւ ունենք։

Աննա. Եւ քանի որ ես ձեզ հետ եմ, կտորեմ և կըտեսնեմ, ինչ որ դու ինձ պատմեցիր։

Կլարա. Եւ այն էլ հաստատ, որ ես այստեղ պարկած

ևմ և չեմ կարողանում արմունկիս վերայ յենուել:

**Աննա.** Բայց ինչ պատճառով այդ հրաշքը քեզ համար ևս չի կատարւում: Ինչո՞ւ մինչև օրս նա քեզ չի բժշկել: Կլարա. —Դա ունի իւր յատուկ պատճառը:

**Աննա.** Բայց ինձ պէտք է հաղորդես, չէ:

Կլարա. Ո՛չ, —ուզում էի ասել —այս բայց ոչ հիմայ —խնդրում եմ պատռհանը կրկին բանաս: Օդն այստեղ շատ խեղդուկ է: Շատ օդ, շատ օդ, Աննա:

**Աննա.** Ինչպէս կուզես: (**Վերին պատռհանը բանում է:**) Կլարա. Նա պէտք է այժմ վերադարձած լինէր. այսօր շատ ուշացաւ: Խրանի թէ այն ծաղիկների հոտն առնէի: Անձ ըկից յետոյ նոցանից շատերը բացուած կլինեն: Շուտով կը-լրանայ 7 ժամը, համարեա 7-ը:

**Աննա.** (**Նայելով ժամացոյցին.**) այն, այդպէս է:

Կլարա. Քանի որ ես այստեղ պառկած եմ, միշտ գիտեմ թէ որ ժամն է: —Մաքուր օդը չի ուզում մինչև ինձ հասնել: Ինչպէս երևում է քամին դադարել է: —Դու ինձ բոլորովին չես առարկում, չես պատասխանում:

**Աննա.** Որովհետեւ ինչ որ ասում էիր ես չէի լսում. զարմանքից դեռ խելքս գլուխս չի գալի:

Կլարա. Այո, դա մի աչքի ընկնող երեոյթ է մեր երկրում. գուցէ և մեր ամբողջ ժամանակին:

**Աննա.** Բայց ինչ են ասում մարդիկ այդ մասին: Ինչպիսի աչքով է նայում դորան գիւղացի ժողովուրդը:

Կլարա. Ես կարծում եմ, որ եթէ այս երեոյթը մի այլ աեղում տեղի ունենար, գուցէ տաս, հարիւր անգամ աւելի ուշադրութեան արժանանար, քան թէ այստեղ, սոցա այն պէս է թւում, որ կարծես այդպէս էլ պէտք է լինէր:

**Աննա.** Ուզում ես ասել, որ հրաշքը ամեն տեղ կըաշք է:

Կլարա. Մեզ համար այն, բայց այս բնութեան մէջ կայ մի բան, որ մեզանից սովորականից դուրս բան էլ է պահանջ լում: հէնց բնութիւնն անցնում է իւր բնական ընթացքից: մեզ մօտ համարեա ամբողջ ձմեռը զիշեր է, իսկ ամառը լոյս ցերեկ. այնպէս որ արեգակը զիշեր և ցերեկ գտնւում է հորիզոնի վերայ: Դու արդէն զիշերով արեգակը տեսար. կիսաշափ ծովի մառախուղով ծածկուած և սովորականից երեք չորս անգամ մեծ է երեսում: Ինչպիսի տպաւորւթիւն. երկնքի, ծովի և ժայ-

ուերի վերայ, մութ կարմիր գոյներից մինչև նուրբ և քնքոյշ՝ դեղին կամ սպիտակ գոյները. իսկ ձմեռ ժամանակ ոչ մի գոյն թէպէտ ըստ մեծի մասին մառախլապատ, բայց կազմում է առանձին ձևեր, միշտ անհանգիստ և փոփոխական: Բայց բը-նութեան միւս հրաշալեները ծովային այս միլիօնաւոր թըռ-չունները, օրավար երկարութեամբ ձկների երամները, այս ցցուած ժայռերը, որ ծովի միջից անմիջապէս դուրս են պրծ-նում: սոքա միւս սարերի պէս չեն և Ըստանտեան ովկիանոս վշացնում, զգացնում է նոցա ստորոտաները:

Մարդկանց երեակայութիւնն էլ բնութեան համապատաս-խան՝ անվերջ անսահման անշափ: Նոցա հէքիաթներն և ա-ռասպելներն էլ նոյնն են պատմում, իրը թէ մի երկիր միւս երկրի վերայ է բարձրանում և թէ հիւսիսային բնեռից սառ-ցակոյտները պարելով այստեղ են գալիս: Դու ծիծաղում ես: Բայց լսիր մի անդամ այդ առասպելները, խօսիր այդ մարդ-կանց հետ և քեզ համար հասկանալի կլինի, թէ ինչու Զանգն հենց իրանց սրտի ուզած մարդն է: Նոցա հաւատոն այս տեղին յարմարում է: Նա այստեղ հարուստ եկաւ և համարեա իւր բոլոր ունեցածը սորան.նորան բաժանեց. և շատ հասկանալի է, որովհետև սա է նորա դաւանած քրիստոնէութիւնը: Երբ երկար ճանապարհ կտրելով զնում է մի հիւանդ երիսյի մօտ, որպէս զի նորա հետ ազօթի, նորա նորա առաջ իրանց սրտերն են բանում և լոյսն է թափանցում անմիջապէս—: Շատ ան-դամ տեսնում են նորան մենակ կամ երեխաներից մէկին կամ երկուսին իւր հետ առած-որոց արդէն վեց տարեկան հասա-կից հետն է վերջնում—վտանգաւոր, վատ եղանակին ծովի վերայ մի փոքրիկ նաւակի մէջ նստած նաւելիս: Նա կատարում է հրաշք և նորից նաւում դէպի մի այլ ձկնորսի տնակ. այնտեղ ես նոյնը կատարում և այն. և նոքա էլ նորանից այդ են սպասում: Դեռ աւելին—եթէ ես նրան քիչ լատ յետ չկասեցնէի, հիմա գուցէ մենք էլ ապրելիս շինէինք, ինչպէս նա ինքն և երե-խաները. իմ մասին լոռում եմ, որովհետև իմ վերջն եկել է:

Աննա. Բայց և այնպէս դու նորան յիտ չես կասեցրել—

Ալարա. Միայն այդպէս թւում է: Ես իսկապէս կատա-րել եմ այդ: Իրերի ներկայացնելը ոչինչ չեն օգնում: Ո՛չ, ես ամեն անդամ նոր բան պէտք է հնարեմ—ամեն անդամ նո-րութիւն. այլապէս նկատում է, և այդ արդէն յուսահատութեան-է հասցնում:

**Աննա.** Նոր բան հնարել, ասում ես:

Կլարա. Նորա համար մի ամբողջ մտապատկեր գութեան չունի, այն է՝ հասկացողութիւն իրականի գոյութեան մասին: Նա ոչինչ չի տեսնում, բացի այն՝ ինչ որ ուզում է տեսնել Այդ իսկ պատճառով նա մարդու մէջ ոչ մի վասրան չի տեսնում, այսինքն նա այդ տեսնում է, բայց հոգս չի պատճառում «մարդկանց մէջ ես բարին եմ ընդունում—ասում է նա, երբ նրանց հետ խօսում է, նոքա նորա կարծիքով բոլորն էլ բարի են, անպայման բարի, և նայում է նրանց իւր անմեղ, երեխայի հայեացքով: Բայց ի հարկէ այս բանը միշտ լաւ հետևանք չի ունենում. այդպիսի մարդկանց համար նա մեզ քարուքանդ է անում:

Աւ այսպէս նա վարուում է—կարող ես երևակայել—մեծից մինչև փոքրի հետ և ընդհակառակը. նա նոյն իսկ մեզանից և այն կվերցնէր, ինչով որ մենք վաղն ապրելու էինք. Շնորհած մեզ կրկին կվերադարձնի, որովհետև նա մեզ հրամայել է այդպէս վարուեք ասում է նա:

Եւ երբ ծովի վերայ վատ եղանակ է և փորձուած, հմուտ նաւաստիներն անդամ չեն կամենում ծովը դուրս գալ, նա իւր հետ վերցնում է երեխային ղեկը վարելու համար և նաւակ նոտում ու ճանապարհ ընկնում:

Վատ եղանակին սարերն է զնացել և երեք օր շարունակ առանց հաց ու ջրի անտեղ թափառել. նորան փնտրել գտել են և նորից յետ բերել. բայց դարձեալ նոյն եղանակին նորից նոյն ճանապարհը կտրել, որովհետև հիւանդ է ապասում:

**Աննա.** Եւ այդ բոլորին դիմանում է:

Կլարա: Բոլորին. Քնում է որպէս մի յոգնած երեխայ և քնում ու քնում. յեփոյ զարթնուս մի բան ուտում և նորից նոյնը սկսում: Նա ծաղրում է ամեն մի հաշիւ, որովհետև միանդաման անպարտ է:

**Աննա.** Ո՞րչափ սիրում ես նորան:

Կլարա. Միակ բանը, որ ինձ համար մնացել է՝ այդ է. բայց այդ էլ երեխաների պատճառով ինձ ուժապառ արաւ:

**Աննա.** Երեխաների:

Կլարա. Նոքա այս պայմանների մէջ տանջւում են. ոչ մի կանոնաւոր և յարատե դըութիւն. մշտական անհանգստութիւն: Ոչ մի մերժում, ոչ մի յապաղում, եթէ մի բան մի ան-

դամ լաւ է հանաչուել։ Զկայ ոչ մի ինքնուրոյն դատողութիւն, այլ ներշնչում։ Նոքա արդէն մեծացել էին. բայց հավիւ էին կարողանում կարդալ-գրել։

Գիտես թէ ինչպէս թանգ նստեց ինձ, մինչև կարողացայ այստեղից ուղարկել այն հինգ տարին, որ նոքա այնտեղ օտարութեան մէջ մնացին իրանց համար անհրաժեշտ կրթութիւնը ստանալու համար։ Այս, դա իմ վերջին ուժը սպառեց։ այժմ ամեն բան վերջացած է։

**Աննա.** Իմ սիրելի Կլարա։

Կլարա. Քիչ թէ շատ դու հօ հաւատում ես... այժմ կարծեմ ինձ համար այնքան չես ցաւիլ, ինձ համար, որ այս ճանապարհն աշխարհիս ամենալաւ մարդու հետ, մարդկային ամենամարզուր կամաց հետ անցել եմ։ Թէպէտ մարդս այս դրութան մէջ երկար չի ապրում—բայց հօ չի կարելի բոլորը միացնել։

Խոկ փոխել—նոյն խոկ չեմ էլ մտածում։

**Աննա.** Ուրեմն նա ձեզ բոլորիդ էլ խանգարել է։

Կլարա. Այս. բայց ոչ բոլորը, որ չէր կարող. որովհետեւ եթէ կամենար խոկ, ինքն ևս կը կործանուէր. չէ որ նա էլ ուժից վեր չէ։

**Աննա.** Ուժից վեր չէ, խոկ եթէ հրաշքներ է կատարում և միշտ ազատ դուրս գալիս։

Կլարա. Միթէ չես հաւատում, որ հրաշքները, որ նա կատարում է, հենց նրանից է առաջանում, որ ուժից վեր չէ։

**Աննա.** Դու ինձ փախեցնում ես։ Ի՞նչ աս ուզում ասել։

Կլարա. Ուզում եմ ասել, որ մարդարէների հետ ևս նոյնըն է տեղի ունեցել, որոնք հրէաների և հեթանոսների մէջ քարոզում էին։ Որոշ պարագաներում նոքա աւելի կանէին քան թէ մենք այլ հանգամանքներում, որովհետեւ նոցա շատ բան մնացեալ ուղղութիւններում պակասում էր։ Այս, այդպէս եմ ես մտածել։

**Աննա.** Ուրեմն դու չես հաւատում։

Կլարա. Հաւատում. ինչ ես հասկանում այդ ասելով։ Մենք երկուսս էլ քոյրեր ենք, առաջ ենք եկել մի հին, զղային կասկածող սերուղից։ նոյն խոկ կարող եմ ասել ինտելիգենտ սեռից։ ևս հիանում էի Զանզով. նա ուրիշների նման չէր. նա բոլոր միւսներից լաւագոյնն էր. ես հիանում էի նորանով, որովհետեւ նորան սիրում էի և նորա պատճառը նորան աւատը չէր, այլ մի ինքնուրոյն բան, որ նորան է միայն յա-

տուկ: Խսկ թէ որքան իմ հաւատը նորա հաւատին համապատասխանում է, ես ինքս էլ չդիտեմ.

**Աննա.** Ինքդ էլ չդիտեմ:

**Կլարա.** Ես միշտ այնպէս խառնաշփոթ դրութեան մէջ եմ եղել, որ այդ բանն ինձ համար պարզելու ժամանակ անգամ չեմ ունեցել: Այն ինչ դորա համար հարկաւոր էր ժամանակ: Խսկ մէկ օրից միւս օր բաւականին գործ ունէի կատարելու: Այս բոլորն ինձ շատ վաղ վրայ հասաւ: Ես տեսնում էի, որ մեծ հարցեր վճռելու դեռ հասունացած չեմ:

Հազիւ կարողանում էի ինձ պարզել, թէ ինչն է արդարն և ինչն է անարդար և ի հարկէ ոչ մանրակրկիտ այլ էապէս գլխաւորներն այնպէս, ինչպէս ինքս էի հասկանում: Նոյնը տեղի էր ունենում և հաւատի վերաբերեալ—ես չէի կարողանում յաղթել, հոււանել:

**Աննա.** Եւ նա այդ զիտէ:

**Կլարա.** Նա բոլորը զիտէ: Ի՞նչ, դու կարծում ես թէ ես նորանից բան եմ ծածկում:

**Աննա.** Եւ նա ոչ մի անգամ չի փորձել քեզ իւր հաւատի դարձնել:

**Կլարա.** Բոլորովին ոչ գինչ որ հաւատին է վերաբերում —ասում է նա—դա Աստծու գործ է. այլ կերպ չենք կարող լինել բացի ճշմարիտ լինելուց, այսուղ լինեինք թէ այնտեղ վերջապէս պէտք է հաւատայինք: Օ՛հ, նա այդ շատ լաւ է հասկանում:

**Աննա.** Բայց չէ որ նա իւր հաւատի տարածման համար է աշխատում:

**Կլարա.** Ըստ իւր տեսակի. բայց ոչ մի անգամ խօսութեան կամ ստիպման չի դիմում: Նա ակնածող է դէպի բոլորը—հասկանում ես, դէպի ամեն բան—նա մի եզակի անձնաւորութիւն է:

**Աննա.** Դու նորան նայում ես այժմ այնպէս, ինչպէս քո սկզբի ուրախութեան օրերի ժամանակ, թէպէտ աչքերդ ծերացել են:

**Կլարա.**—Եւ թէպէտ իմ աչքերը ծերացել են:

**Աննա.** Խսկ ինչ վերաբերում է նորա կատարած հրաշք-նկրին հաւատալը, այդ հաւատը քեզ պակասում է:

**Կլարա.** Եւ ինչպէս ասում ես, չկայ մի բան, որին այնպէս հաւատայի, ինչպէս դորան և այն էլ անպայման:

Աննա. Երբ դու փոթորկի ժամանակ նորան չես թողնում քեզանից հեռանալ և կամ չես հաւատում, որ նա կրկին կը վերադառնայ, թէ կուզ սա առաջին և վերջին անգամ լինէր, կնշանակէ, որ քո մէջ իսկական հաւատը պակասում է:

Կլարա. Նախ քան քեզ հետ համաձայնելը, պէտք է քեզ ասեմ, որ հենց այդ բանի վերայ է հիմնուած իմ ամբողջ սյժը:

Աննա. Լաւ. բայց դա հաւատի ուժ չէ:

Կլարա. Ոչ և դարձեալ ոչ. իսկ եթէ դորա մէջ մի հակասութիւն կայ—ուրեմն ինչ. Մենք բոլորս հակասութիւններ ունենք. միայն նա է, որ չունի:

Բայց դարձեալ ասում եմ քեզ, որ եթէ դու քեզ կամ երեխայիդ ծովն ես ձգում, սա հաւատալուցն էլ վեր է, այդ նշանակում է «Աստծուն փորձել»:

Աննա. Ինձ թւում է, որ հրաշքը հրաշք է. միւնոյն է իւր անձի թէ մի ուրիշ վերայ է կատարում:

Կլարա. Բայց չէ որ դու քո կեանքը վտանգի ես ենթարկում:

Աննա. Եթէ այդ ուրիշներին ազատելու նպատակով է լինում, այն ժամանակ հազիւ թէ կարելի է «Աստծուն փորձել» անուանել:

Կլարա. Աննա, խնդրում եմ այդ ժամին շխօսենք. ես չեմ կարող ըմբռնել...: Միայն այն գիտեմ, որ երբ նա իւր երեխաներից վերցնում է այն, ինչով որ պէտք է խաղըէին և տալիս է ողորմելի, աղքատ մարդկանց և կամ մառախնապատեղանակին սարերն է գնում և կամ փոթորկին ովկիանոսում նառում, այն ժամանակ ես կտրում եմ նորա ճանապարհը: Եւ ամեն միջոց գործ եմ դնում, ամենը, ինչ որ մտածել, հնարել կարող եմ, միայն թէ նորան արգելք հանդիսանամ:

Ես ընդունում եմ, որ նա այս կամենում էր... Քանի ամիս է, որ ես չեմ կարողանում ոտքերիս վրայ կանգնել—այն ինչ ես կարող էի. ես այդ կարող էի. հասմողուած եմ: Ես ես հրաշք եմ կատարում. որովհետև ես նորան և նորա որդոց սիրում եմ: (Ծրկար լուսթիմ):

Աննա. Զեմ կարող քեզ մի բանով կազդուրել:

Կլարա. Տուր ինձ մի քիչ կեօլնեան ջուր. այստեղ, այստեղ անկողնիս վերայ ածա, քիչ էլ, որ հոտ առնեմ. միայն շտապիր—չե՞ս կարողանում խցանը հանել—ահա այնտեղ է խցահանը. այնտեղ, պատուհանի վերայ և վերին պատուհանն

**Ել բաց. ոյդ Եր**

**Աննա. Այս, այս ըստեին:**

**Կլարա. Շնորհակալ եմ: Եթէ գետինն այսքան երկար-  
անձրկից յետոյ խոնաւցած չվնէր, շատ կցանկայի ազատ  
օդում մտնեգալ: Չես կարողանում խցանը հանել:**

**Աննա. Այս, այս ըստեին:**

**Կլարա. Աւելի խոր պայոյտ տուր. բայց ոչ այդքան խոր-  
նայիր, տես, այսպէս—արի—ահ—յասմիկը:**

**Դննա. Յասմիկ—որտեղից է այստեղ յասմիկ:**

**Կլարա. Յասմիկ, յասմիկ—նա է, ես լսում եմ, նա է—  
փառք Աստուծոյ. այժմ հանգիստ եմ, հանգիստ: Ինչ բաղդաւո-  
րութիւն. այս, նա է: (Զանզը ներս է մտնում):**

### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ

**Զանգ. Կրկին անգամ բարի առաւօտ!—Բարի առաւօտ,  
սիրելի Աննա. ինչ լաւ է, որ այստեղ ես. ախ որքան լաւ  
է, որ դու այստեղ ես:—Այսպիսի գեղեցիկ առաւօտ լի զո-  
վութեամբ և երգերով, կարծում եմ, որ ձեզ մօտ Ամերիկա-  
յամ ինչպէս և ոչ մի տեղ աշխարհում չի լինում:**

**Կլարա. Բայց իմ ծաղիկները!**

**Զանգ. Գիտես այսօր ինձ ինչ է պատահել, Կլարա:**

**Կլարա. Ծաղիկներն ուրիշ ես տուել:**

**Զանգ. Ա՛խ, ոչ—հա հա—ինչպէս մեր Տօրդէնսկեօ-  
դըն է ասում, այս անգամ ոչ. սպասիր, դու չարաճնի. այս  
տեղ անձրեկի պատճառով մենք շատ ենք կտամքեն և լու-  
ատնք թափել: Որովհետև մենք վախենում էինք, որ հեղեղներ,  
քարեայ կոյտերի վլուածքներ և դորա նման անբաղտութիւն-  
ներ և արհաւերքներ<sup>բայց</sup> տեղի կունենան—բայց, ինչպէս տեսնում  
էք, անձրել բացի հրաշալիքից, գեղեցկութիւնից և հիաց-  
մունքից, ուրիշ բան չառաջացրեց: Այսօր, երբ վերջապէս  
դուրս եկայ և նայում էի արեգակին, ծաղկանց հրապիսի ըուր-  
մունք. ոչ մի անգամ այդ օրինակ ես չէի տեսեր ես բարձրա-  
ցայ վերև բուրմունքի և պէս-պէս զոյների առաւտութեան թա-  
գաւորութեան մէջ և գիտես... ինձ տիրեց մի տեսակ տրա-  
մադրսւթիւն, որ ոճրագործութիւն է հեռու գնալ և ոտնատակ  
տալ ծաղիկները, որոնք այնտեղ բուսել և անշափ ուրախու-**

թիւն են պատճառում: Այն ժամանակ իջայ մի կողմով, մը ունատեղ գտայ և այդտեղից դիտում էի նոցա թաց աշքերը. ինչպիսի առատութիւն, ինչպիսի մղում, բաղձանք և հէնց այդ բաղձան քի մէջ մի ձգտում ինքնապաշտպանութիւնը պահպանելու համար. Նոյն իսկ ամենափոքրերն անգամ անյագ ձգտում էին իրանց միզը դէպի արեգակը դարձնել: Նոքա ևս անշափ սրտաբաց և տենչալի: Շատերն իրօք այնպէս անժամանակ է-ին բացուել, որ ինձ թւում էր, մինչև տրեգակի մայր մտնելը քամին նոցա սերմերը վայր կթափի: Արդէն երևում էին մի քանի դատարկաշրջեկներ (Hustumeln), որ իրանք էլ չգիտէին թէ բուրմունքի այս հոսանքի մէջ ուր են գնալու. քանի որ չորս բոլորը հազար հազարաւոր ծաղիկներ իրանց հոտերով մէկը միւսից գերազանցում էին. այն էլ անհամար անգամ: Խնքս ինձ հարցնում էի: Միթէ այս միխօնաւոր շնչաւորների մէջ ևս անհատականութիւն (Individualität) կայ—ի հարկէ: Եւ հենց այդ պատճառով սիրոս չէր տալիս նրանցից մէկը պոկեր: Բայց ես քեզ համար ուրիշ բան եմ քերել:

**Կլարա.** (այս լսելով քրոջը նշան է անրւմ) Դու ունիս:

**Զանգ.** Այսօր պէտք է փորձեմ բերանս բանար

**Կլարա.** Ի՞նչ ես ուզում ասել, սիրելիս:

**Զանգ.** Ի հարկէ. դու այնպիսի մարդու տեղ չես ընդունել, որ քեզնից մի բան ծածկել կարող լինէի: Բայց ես այդ կարող եմ:

**Կլարա.** Ես արդէն վագուց նկատել էի, մի ինչ որ—:

**Զանգ.** Ա՛. իրաւ, որ իսկապէս ճիշտ ես ասում, որովհետեւ այս անդամ ես լրութեան եմ տուել: Բայց եթէ ես քո հիւանդութեան պատճառով այնպէս անհանդիստ չեմ եղել, ինչպէս ուրիշները, այդ էլ իր որոշ պատճառն է ունեցել:

**Կլարա.** Բայց ինչ է այդ պատճառը:

**Աննա.** Ինչ է պատճառը: Նա յուզուում է:

**Զանգ.** Այս բոպէին.—Ես շատ շատերին եմ օգնել. բայց սորան անկարող եմ եղել որովհետեւ ես սորա հետ կանոնաւոր ջերմեռանդ աղօթել չեմ կարող. նա ինձ դիմադրում է. ինձ դիմադրում է. և ես անզօր եմ, երբ հիւանդն ինձ հետ չի աղօթում. պարզ բան է, եթէ միայն նա աղօթել կարող է: Եւ ես հենց այդ պատճառով մեր երեխանցը գրել էի, որ դան: Նրեկ, երբ ես դեռ շատ վաղ վերև ննջարան տարայ, նոցա ասացի թէ իրանց ինչու եմ կանչել: Նոքա դեռ պէտք է մի լուսութ:

լաւ քննեն, իսկ յետոյ ինձ օդնեն, որես նոցա մօր անկողնի մօտ կարողանամ աղօթել:

Կլարա. Ա՛խ, իմ բարի, իմ բարի Զանդ:

Զանգ. Մենք կամենում ենք աղօթքէ շղթայով քեզ շրջապատել: Մէկը սոքերիդ կողմը կլինի, միւսը գլխավերեադ, իսկ ես ուղղակի առաջիդ: Եւ մենք չենք դադարիլ աղօթելուց, մինչև որ դու ննջես. ոչ աւելին, մինչև որ ննջես և յետոյ նորից կոկսենք աղօթել, այնքան, մինչև որ դու սոքի կանգնես. և մեզ հետ ման գաս. Այս, մենք այդ ենք կամենում:

Կլարա. Օ՛հ, դու բարի...:

Աննա. Իսկ ինչ էին ասում այդ մասին երեխայքը:

Զանգ. Այս. եթէ դու նոցա տեսնէիր, նոքա յափշտակուած էին. նոքա այնպէս գունատուեցին, այնպէս ըստիտակ, ինչպէս այս սեղանի ծածկոցն և իրար դիտում էին:

Բայց ես նոցա հասկացայ. նոքա ուզում էին միայնակ մնալ:

Ես տեսնում եմ, որ այդ քեզ վրդովում, յուզում է: Դու քակում ես աշքերդ: Գուցէ դու ևս ուզում ես միայնակ լինել: Այս, հիմա մեզ մօտ հիւրեր կը գան. մեծ հիւրեր. պէտք է պատրաստութիւն տեսնել: - Ո՞ր ժամն է:

Աննա. Խօթից անց է:

Զանգ. Չի կարող լինել: Այդ դէսքում նոքա արդէն այստեղ կլինէին: - Ինչպէս երեւմ է մոռացել ես ժամացոյցդ տեղականի հետ դրստել:

Աննա. Ոչ չեմ մոռացել:

Զանգ. Ուրեմն, սիրելի Աննա, ուզիդ չես դրստել Հասակն առած որդիք, որոնք իրանց մօր անկողնու մօտ կամենում են աղօթել, միթէ կարող են քնով անցնել. կարող ես այդ մտածել:

Աննա. Ես ուզում եմ վերև ննջարան բարձրանալ:

Զանգ. Ա՛խ ոչ, մի գնար. վերջին բոպէներում նոցա պէտք է միայնակ թողնել: Ես այդ գիտեմ:

Աննա. Նոքա չեն լսել: Ես ուզում եմ միայն դիտել: (դուրս է գնում):

Զանգ. Բայց շատ կամաց և զգոյշ:

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

**Զանգ.** Որքան լաւ է, որ Աննան այնքան դործունեայ է:  
Կլարա. Դու բարին:

**Զանգ.** Գո ձայնի մէջ մի ինչ որ վիշտ կայ:

ՅՇ, այժմ ես յոյս ունիմ. երրեք, ասում եմ քեզ—այսպիսի  
հաստատ զգացում չեմ ունեցել: Եւ դու գիտես թէ ով է դորա  
պատճառը: Կլարա,—իմ սիրելի Կլարա: (Չոքում է Կլարայի  
անկողնի մօտ):

Նախ քան մեր միասին աղօթելը, թոյլ տուր ինձ, սի-  
բեկի Կլարա, յայտնեմ իմ շնորհակալութիւնը: Այսօր քեզ հա-  
մար ևս գարնանային այս արդաւանդութեան մէջ Աստծուց  
շնորհակալ եմ եղել: Մի անվերջ ուրախութիւն էր իմ շուրջն  
և իմ մէջ: Իմ աչքերի առաջ պատկերացաւ այն բոլորը, որ  
մենք միասին ապրել անց ենք կացրել. գիտես սիրելիս. ես  
կարծում եմ, որ քեզ հենց այն պատճառով աւելի եմ սիրում,  
որովհետեւ դու չես հաւատում այն բոլորն, ինչ որ ես եմ հաւա-  
տում և այդ իսկ պատճառով շարունակ մտածողութեան  
մէջ ես. մանաւանդ այժմ: Գո անձնազոհութիւնը, անձնուրա.  
ցութիւնն ինձ համար առաջ է գալիս ոչ այլ ընչեց, եթէ ոչ  
քո էութիւնից և կամեցողութիւնից: Եւ դու իմ վերաբերու-  
թեամբ նշանաւութիւն և անկեղծութիւն ես պաշտպանել, դորա  
համար ես պարծենում եմ:

Բայց երբ ես մտածում եմ, որ դու—առանց ինձ պէս  
հաւատ ունենալու—դարձեալքո կեանքը ինձ համար զոհներ ես...:

Կլարա. Աղջո՞ֆ:

**Զանգ.** Խթէ խօսես ես ձեռքս բերանիդ կդնեմ: Այժմ  
ես պէտք է խօսեմ.—ախ. այն՝ ինչ որ դու արել ես՝ շատ մեծ  
է: Մենք տուել ենք մեր հաւատը, իսկ դու քո կեանքը: Որ-  
պէս մեծ պէտք է լինի դէպի ինձ քո վստահութիւնը: Որչափ  
քեզ սիրում եմ:

Ամեն անգամ, երբ իմ կրօնական եռանդը քեզ անհան-  
գատութիւն էր պատճառում, դու իմ և երեխաների ապագայի  
համար էիր դողում և գուցէ և հանգիստ չէիր կարողա-  
նում քնել: Այն՝ ինչ դու կատարում էիր, ես լաւ գիտեմ, որ  
քո ուժից վեր էր դորանից լաւագոյնը կատարել:

Կլարա. Ո՞չ, ես դորանից զուրկ էի:

**Զանգ.** Իմ մեղքն է. Ես քեզ պահպանել, խնամել չեմ  
հասկացայ:

**Կլարա.** Ադօփի,

**Զանգ.** Ես գիտեմ. այս այսպէս է: Դու քեզ մեզ համար հետզհետէ զոհեցիր և ոչ թէ ի սէր քո հաւատի կամ յոյս ունենալով որ վարձատրութիւն կատանաս այս կամ այն աշխարհ հում—ոչ, միայն սիրուց դրդուած: Օ՞հ, եթէ իմանաս որչափ քեզ սիրում եմ:

Հենց այսօր կամենում էլ այս բոլորը քեզ ասել: Եթէ Աննան դուրս էլ չգնար, պէտք է խնդրէի, որ մեզ ըիշ ժամանակ միայնակ թողնի:

Շնորհակալ եմ քեզնից: Այսօր քեզ համար մեծ օր է: Շուտով հիմա երեխային էլ կդան:

Օ՞հ, թոյլ տուր քեզ համբուրեմ այնպէս, ինչպէս համբուրել եմ ամենաառաջին օրը:

### ՉՈՐՐՈՐԴԻ ՏԵՍԻԼ

**Զանգ.** Ինչպէս է (ոսա):

**Աննա.** Ժամը 7-ից անց է:

**Կլարա.** Ես այդ գիտէի:

**Զանգ.** Ճիշտ որ 7-ից անց է: — Իսկ երեխայիքը:

**Աննա.** Քնած էին:

**Զանգ.** Քնած էին:

**Կլարա.** Ես այդ գիտէի:

**Աննա.** Ելիասը հագնուած էր: Նա ընկաւ կրկին անկողնի վրայ, կարծես թէ այլևս չէր ցանկանում քնել այլ միայն հանգստանալ: Բայց նորից քնեց: Ուահին էլ ձեռքերը վերմակի վրայ տարածած քնած էր և ոչինչ չէր լսում:

**Զանգ.** Ես իսկապէս երեխաներից շատ պահանջեցի:

**Այդ սովորութիւնը չեմ կարող անում թողնել:**

**Աննա.** Նրանից յետոյ երբ մենք իրար հանդիպեցինք, համարեա երկու օր է անցել և նոքա չեն քնել:

**Զանգ.** Բայց ինչու հենց այսօր Աստուած տուեց ինձ մի այնալիսի ոյժ և հաստատուն դարձրեց: — Ինձ պէտք է պարզեան որ իրաւ ես սորան արժանի եմ: (Մօտենալով կրկին դուանը, դուրս է գնում): Ներեցէք մի բոպէ ինձ, իմ սիրելիք: — Բայց ինչու հենց այսօր — :

## ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՏԵՍԻԼ

Կլարա. Դու նոցա զարթեցը ի՞ր:

Աննա. Բնական է.—Դիտես ինչ եմ մտածում, որ  
ճանապարհին կանդնած է....

Կլարա. Աստուած իմ, այն, ինձ սարսափ է տիրում:  
Աննա. Խ' նշ կարող եմ անել:

Կլարա.. Ոչ, ես ինքս պէտք է փորձէի այս մեղմացնե-  
լու...—ախ—նորա աչքերում երեկ ինչ որ բան էր երևում. այ-  
ժը ես այդ հասկանում եմ:

Աննա. Որ նոքա ալ ևս իրանց հօր հաւատը չունեն:

Կլարա. Նոքա իրանց հօր հաւատը չունեն.—Երևակա-  
ռում եմ, թէ խեղճերը որքան կռուած և տանջուած պէտքէ  
լինեն, խեղճերը. նոքա, որ նորան աշխարհիս երեսին ամեն  
քանից աւելի են սիրում և յարգում:

Աննա. Եւ այդ պատճառով էլ երեկ նոքա այնպէս լուռ  
էին:

Կլարա. Եւ չնչին բանից յուզում: Ահա թէ ինչու է Ռա-  
հիլք քեզ գրել, որ գաս: Զէ որ մէկն այստեղ պէտք է լինի  
քանի որ այդ արիութիւնը նա չունի:

Աննա. Ճիշտ ես ասում—թէ որպիսի կռիւ մղած կինին,  
այդպէս չէ:

Կլարա. Ախ, իմ խեղճ երեխաներ, երեխայք:

Աննա. Ահա գալիս է Ելիասը:

Կլարա. Նա է որ:

Ելիաս (Ներս է մտնում; մօր անկողնի մօտ ծնկնե-  
րի վերայ ընկնում եւ երկու ծեռքերով իւր երեսը ծած-  
կում) Ա՛խ մայր իմ:

Կլարա. Այն, այն,—ես բոլորը գիտեմ:

Ելիաս. Բոլորը գիտես. Դորանից էլ վաս չէր կարող  
ինել:

Կլարա. Ոչ մի բան դորանից վաս:

Ելիաս. Երբ նա երեկ երեկոյեան մեղ ասում էր, որ այ-  
օք 7 ժամին...

Կլարա. Լոիր, սուս, ես այդ չեմ կարող տանել:

Աննա. Ելիաս, մայրդ այդ չի կարող տանել:

Ելիաս. Ո՛չ, ոչ, ես գիտէի, որ այս այսպէս թէ այնպէս  
առեղի է ունենալու: Վերջապէս մի օր պէտք է կատարուէր:

Աննա. Դու կարողանում ես այս լսել, սիրելի քոյքիկ:

Կլարա. Պիտի լսեմ—ասա ինձ:

Աննա. Ի՞նչ:

Կլարա. Եվսոս, դու այդտեղ չես այլ ես:

Էլիաս. Այստեղ եմ, մայր իմ,

Կլարա. Նոյնպէս և Ռահիլը:

Էլիաս. Ի՞նչ ես ուզում ասել, մայրիկ:

Կլարա. Որտեղ է Ռահիլը:

Էլիաս. Հենց նոր վեր կացաւ: Նա մինչև կէս գիշեր ինձ:

Հետ արթուն էր: Բայց երկար չկարողացաւ մնալ:

Կլարա. Ի՞նչպէս, երեխայք.—մի բնչպէս—ինչպէս այդ բալորը տեղի ունեցաւ:

Էլիաս. Որ մենք մեր հօր հաւատը կորցրինք:

Կլարա... Որ դուք ձեր հօր հաւատը կորցրել եք երեխայք:

### ՎԵՃԵՐՈՐԴԻ ՏԵՍԻԼ

Զանգ. (Ներս մտնելով) դուք ձեր հաւատը կորցրել եք—Որդիս—Միթէ քո հաւատը կորցրել ես:

Աննա. Մի նայեր կլարային:—Կլարա, ինչ է պատահել քեզ:

Զանգ. (շտապում է Կլարայի մօտ եւ երկու ծեռքը նորավերայ դնում) արդէն դադարում է, էլ չի կրկնուիր —փառք Աստուծու:

Կլարա. Անցում է. ոչինչ—բայց դու ինձ բռնիր, պահիր ինձ:

Զանգ. Պահում եմ:

Կլարա. Եւ մի թողնիր, որ ես այնպէս լինեմ, որ լացայ, միտ:

Զանգ. Ոչ, ոչ, չպէտք է լալ (Զանգը յենուում է դէպի նա բոլորովին մօտ եւ համբուլում) սիրա առ—Կլարա—տես, այդպէս քեզ մի վշտացնիր: Յիշիր երեխանց, որոնք անչափ վշտացած են: Խրանց այդ դրութեան մէջ էլ նոքա մեր միսիթարում են: Միթէ մենք էլ նոցա չպէտք է մեղք գանք:

Կլարա. Ճիշտ որ:

Զանգ. Տես, քո ուշաթափութեան պատճառը հենց այդ է: Մենք պէտք է նոցա մասին մտածենք, այլապէս դէպի նը-

ըանց մենք անարդար կինենք։ Մանաւանդ ես եմ եռանդով։—Որտեղ է Ռահիլը։

**Աննա.** Շուտով կգայ։ Մինչև կէս գիշեր Էլիասի հետ-  
զարթուն է եղել։

**Զանգ.** Իմ սիրելի որդիք—ինչպէս կարող էք դուք—  
ոչ,—ոչ, ես այս չեմ ուզում գիտենալ—դու միշտ շիտակ ես ե-  
ղել—այդ արել ես, ուրեմն այս էլ կարող էիր...։

**Էլիաս.** Ես ստիպուած էի։ Բայց սարսափելի էր։

**Զանգ.** Ինձ մօտ քո հաւատն աւելի հեշտութեամբ։  
Ես ձեռք քերում։ Զէ որ ես զգացմունքի մարդ եմ. բայց գու-  
ցէ սա սկիզբն է մի այլ հաւատի, որ այլ ևս կորստեան չի  
մատնուիլ։

**Էլիաս.** Ինձ թւում է, որ ես ոճրագործ եմ, թէպէտ այդ-  
պէս չեմ։

**Զանգ.** Որդիս, դու կարծում ես, որ ես վայրկեան անգամ-  
կասկածում եմ։ Իմ պակասութիւնը քեզ չպէտք է մոլորեցնի։  
Այս առաջ է գալիս նրանից, որ ես համոզուած էի, թէ դուք  
խսկապէս հաւատում էիք։ Հարկաւոր է բաւական ժամանակ  
մինչև որ ես...—ոչ, ոչ, ներիր ինձ, Էլիաս—այդ քեզ հետ բո-  
լորովին կապ չունի։

(Ռահիլը ներս է մտնում, բայց մի քանի քայլ ա-  
նելուց յիսոյ վախեցածի պէս յիս-յիս է գնում եէ կանգ-  
նում։ Զանգը դիտում է նորան)։

**Զանգ.** Ռահիլ, — ախ իմ սիրելի Ռահիլ (Ռահիլը մօտե-  
նում է եւ ծնկների վերայ խոնարհում նորա առաջ) ե-  
րեխայութեան հասակից սկսած դու սովորեցիր աւելի ինձ հա-  
ւատալ, քան գրքերի գրուածներին—։

Ի՞նչպէս կարող էր այդ պատահեր Եթէ քեզ այդ գրքերը համոզել են, ուրեմն ես ևս ուզում եմ իմանալ, թէ  
ինչպէս է պատահել—որ քեզ ինձնից կարողացել են յափշտակեր։

**Ռահիլ.** Ոչ քեզնից, հայր իմ։

**Զանգ.** Ներիր, ես չէի կամենում քեզ խոցել, արի ինձ  
մօտ։ (Ռահիլը ընկնում է հօր գիրկը)։ Ես ձեզ հասկանում  
եմ, երեխաք։ Սյժմեանից յետոյ, այլ ևս այդ մասին ակնար-  
կութիւն չեմ անիլ. բայց միայն կուզէի իմանալ—և դորա հա-  
մար մի զարմանաք—թէ ի՞նչպէս այդ տեղի ունեցաւ։

**Էլիաս.** Եթէ կամենայիր օրերով իսկ այդ մասին ինձ

հատ խօսել, հայր, ևս դարձեալ բոլորը չեն կարող պատմել վերջացնել:

**Զանգ.** Ոչ, ես դորա համար պիտանի չեմ: Իմ բանը չէ հաւատի մասին խօսել: Ես դորանից ոչինչ չեմ հասկանում: Լվիաս. Բայց դու ինձ պէտք է լսես:

**Զանգ.** Եթէ այդ քեզ կհանդստացնի, այն ժամանակ դու պարտաւոր ես պատմել և ես էլ այդ եմ կամենում: Բայց չեր կարող կարճ ասել—բոլորովին կարծ—ինչը քեզ այս օրին հասցըրեց: Ինչը ձեզ համոզեց, իմ երեխայք:

Լվիաս. Ես կարող եմ քեզ բոլորովին կարճ ասել: Ռահի-ը, ինչպէս և ես տեսանք, գտանք, որ քրիստոնեաներն այն տեսակ չեն, ինչպէս դու մեզ սովորեցրել, ասել ես.

**Զանգ.** Բայց երեխայք:...

Լվիաս. Դու մեզ ամենալաւերի մօտ սւղարկեցիր, որոնց դու ճանաչում ես: Եւ նոքա իսկապէս, որ լաւերն էին: Եւ երկուս էլ եկանք մի համոզման և նա առաջինն ինձ ասաց մի-այն մի քրիստոնեայ մարդ կայ և այդ մեր հայրն է:

**Զանգ.** Բաւական է, երեխայք:

Լվիաս. Նոցա քրիստոնէութիւնը մի համեմատութիւն է, միաբանութեան մի դաշն—կեանքի և ուսման մէջ նոքա իսա-նարհուում են դոյութիւն ունեցող իրերի առաջ—այսինքն այն բոլորի, ինչ որ իրանց համար և իրանց ժամանակին դոյութիւն ունին, այն է՝ իրաւագիտութեան սկզբունքի, դատողութեան, սովորութիւնների, տնտեսական բոլոր դէպքերի և հանդաման-քնների առաջ:

Նոքա իրանց ուսման մէջ մի ելք են գտել, որ գոյութիւն ունեցող հանդամանքներին միշտ յարմարւում է:

**Զանգ.** Շատ խիստ չեմ վերաբերւում:

Լվիաս. Դու փնտրում ես իդէալականն և յետեսում դորան: Այդ է միայն զանազանութիւնը:

**Զանգ.** Բայց ինչ կարիք ունէիք այդ զանազանութեանը, սիրելի երեխայք:

Լվիաս. Նա մեզ դէպի իրան քաշեց, որպէս զի աւելի խոր մտածենք: Միթէ այդ քեզ զարմանալի է թուում:

**Զանգ.** Մտածեցէք, որքան կամենում էք: Բայց միայն դատաւոր մի հանդիսանաք:

Ռահիլ. Ես չեմ կարծում, որ այդպէս վարուած լինենք և գիտես ինչու, որովհետև մենք տեսնում էինք, որ նոցա հա-

ւատն իրանց վերաբերութեամբ նոյնքան բաւական է որքան  
և քո հաւատը քեզ համար:

Զանգ Յետոյ:

Էլիսա. Բայց ո՞րն է քրիստոնէութիւնը. չէ որ նորանցը  
խսկական քրիստոնէութիւն չէ:

Զանգ. Ընդունենք այդ չէ.—ի՞նչ վնաս, եթէ նոքա այն-  
պէս են վարում ինչպէս իրանք են հասկանում:

Ռահիմ. Սիրելի Հայրիկ, միթէ քրիստոնէութիւնն այն է,  
որին միլիօնաւորներից միայն մէկը կարող է հասնել:

Էլիսա. Նև միւսները լոկ վրիպանքներ պիտի մնան:

Զանգ. Որդիս, ում ես քրիստոնեայ համարում:

Էլիսա. Միայն նրան եմ քրիստոնեայ համարում, որը  
Քրիստոսից կատարելութեան խորհուրդը սովորել է և նրան,  
որ ամեն բանով ձգտում է նորան հասնել:

Զանգ. Որպիսի գեղեցիկ և սիրելի բացատրութիւն: Դո՞ւ  
քո քննուշ մօրից հասկացողութիւն ես ժառանգել:—Դա միշտ  
եղել է իմ մտածողութեան առարկան. ես միշտ երազել եմ  
այդ: Բայց մի անգամ—ոչ, ոչ, և ոչ, ես ձեզ գովեցի, երե-  
խայք, և խօսքս կկատարեմ. դու ասում ես—ճիշտ է,  
հիանալի:

Բայց, որդիս, միթէ իւրաքանչիւր մէկին ազտա չի թող-  
նուած փորձել քրիստոնեայ լինել, առանց վրիպանք անուն ժա-  
ռանգելու: Միթէ հաւատն այստեղ անհրաժեշտ չէ: Միթէ հա-  
ւատը միլիօնաւոր թոյլերի դիմաց միայն մէկի համար է:

Էլիսա. Հենց ինքոր ես ասում, եթէ մենք մեր բոլոր ու-  
ժերով ձգտում ենք, չէ որ հաւատն անհրաժեշտ է:

Զանգ. Ի հարկէ, յետոյ:

Էլիսա. Բայց այդպէս վարում է միայն մի մարդ և այդ  
դու ես: իսկ միւսները—առանց վախենալու կասեմ—քանի որ  
ես նրանց մեղադրելու նպատակաւ չեմ ասում և իրաւունք էլ  
չունեմ—իսկ միւսները՝ կամ հեռացնում են դորանից այնքան,  
որ իրանց խնձով լինի կամ իրօք փորձում են կատարել և մո-  
լորում են. այն, մոլորում:

Ռահիմ. Այն, հենց այդպէս և հենց այդ է պատճառը, որ  
ես Էլիսաին ասում էի, որ եթէ այս իդէալներն այսօրուայ  
կեանքի պայմաններին և մարդկանց գործերին այնքան քիչ են  
համապատասխանում, յարմարում, չեմ կարծում, թէ դոքա  
Ամենագէտից առաջ եկած լինեն:

Զանգ. Դու այդ տօնել ես:

Էլիհաս. Եւ մենք չեինք կարողանում այդ կասկածից աղտոռել և այն ժամանակ սկսեցինք հետազոտել. Սենք սկսեցինք այդ իդէալները պատմութեան մէջ փնտրել սկզբից մինչև մեր օրերը:

Ռահնիլ. Եւ գտանք, որ նոքա բոլորը միասին աւելի հին են քան թէ քրիստոնէութիւնը, հայրիկ:

Զանգ. Ես այդ գիտեմ, իմ երեխայք:

Էլիհաս. Քրիստոնէութիւնից շատ առաջ այդ իդէալները մոլեռանդներից քարոզուել է—.

Զանգ.—Այն. Արևելքի և Յունաստանի մոլեռանդներից և յուսահատութեան մի ժամանակ, երբ լաւագոյնները ձգտում էին, տենչում էին մի այնպիսի երկիր, որտեղ ամեն բան նոր պէտք է լինէր. աւելի հեռուն: Ես այդ գիտեմ, իմ որդիքս:

Ահա թէ որտեղ էք գուք քարին առել (straucheltet) Տէր իմ Աստուած:

Կարծես այս նոր երկիրը, հազարամեայ երկիրը նոյնպիսի մի ճշմարտութիւն չէր, թէպէտ սա հնուց շատ հին արևելքի երազ էր:

Եթէ նոքա իրանց այնքան երկար սպասեցնել են տուել, որ թոյլ սրտերը դորան անկարելի երազ են համարում, իսկ դէպի այնտեղ տանող պահանջներն անկարելի գաղափարներ— ինչ է դա ապացուցանում:

Չէ որ այնքան չենք կարող ուսման դէմ, որքան ուսուցանողի դէմ լինելի Այն, շատ և շատ ուսուցանողների վերաբերեալ:

Ես նորանց մասին երկար չեմ ուզում խօսել. միայն ձեզ կասեմ այն, ինչ որ ինձ հետ է պատահել:—Ես տեսնում էի, որ քրիստոնէութիւնը փորի վերայ է սողում միաժամանակ ամեն մի բարձրութեան մօտով թէպէտ շատ զգոյշ. Ինչու այսպէս, հարցնում էի ինքս ինձ. դուցէ այն պատճառով, որ եթէ սա ուղղուէր, ամեն բան իւր ճանկերից կընկնէր: Միթէ քրիստոնէութիւնն անմատչելի է. թէ մարդիկ չեն համարձակւում փորձել:

Եթէ մէկը համարձակութիւն ունենար, այս փորձել միթէ հազարաւորները նոյնպէս չէին հետևիլ դորան. և այդպէս ինձ համար պարզ էր. Ես ուզում էի փորձել այդ մէկը լինել և կարծում եմ, որ իւրաքանչիւրը պէտք է փորձի: Եթէ չի կա-

տարում, ուրեմն նա հաւատացող չի. որովհետև հաւատալ նշանակում է՝ համոզաւած լինել, որ հաւատացողի համար անկարելի ոչինչ չկայի—եւ ապա այդ հաւատը ցոյց տան:

Միթէ այս ինձ գովելու նպատակաւ եմ ասում. ընդհակառակն ինձ մեղադրելու, որովհետև թէպէտ ես, որ այնքան բարձր շնորհի եմ արժանացել և չնայելով դորան նոյն իսկ այժմ կասկածում էի, բայց դարձեալ Աստուծուց չեռացայ: Միթէ ինձ համար անհնարին չհամարեցի ձեր մօրն առանց ուրիշի օգնութեան ազատելի Միթէ չկասկածեցի և ուրիշի օգնութեան չալասեցի:

Հէնց այդ պատճառով Աստուծած այդ օգնութիւնն ինձնից վերցրեց, որ դուք այն որ կարելի է տեսնէք և գայիք պատմէիք. որովհետև այսպէս պէտք է նորաժամը պատրաստելի եւ հիմա նա կամենում է մեզ բոլորիս ցոյցտալ այն, ինչ որ ճշմարտութեան մէջ կարելի է:

Ա՛խ, ես աշխատում էի և չէի հասկանում, այժմ ես հասկանում եմ. ես պէտք է միայնակ գլուխ բերեմ, ես հրամաստացայ. այժմ ես այդ կարող եմ:

Ահա թէ ինչու համար է նախապատրաստութեան մեծ շնորհը բոլորը միասին հաւաքըւում:

Լուսմ ես, Կլարա, այս ես չեմ, որ խօսում եմ. այլ հաստատ. համոզմունքն իմ մէջ և դու գիտես թէ դա ումնից է առաջանում (չոքում է Կլարայի առաջ): Կլարա, իմ սիրելի Կլարա, ինչու դու ևս Աստծուն այնպէս սիրելի չը պէտք է լինես, ինչպէս իւրաքանչիւրը, որ իւր ամբողջ սրտով նորան հաւատում է: Միթէ Աստուծած մեր բոլորիս հայրը չէ:

Աստուծոյ սէրը հաւատացեաների արտօնութիւն չէ: Հաւատացեաների առանձնաշնորհն է նորա սէրն զգալ և իրանց ուրախացնել և նորա անունով անկարելին կարելի դարձնել:

Օ՛հ դու, իմ համբերող, իմ հաւատարիմ Կլարա և այժմ քեզնից հեռանում եմ, որպէս զի քեզ ապացուցանեմ: (Ոտքի է կանգնում): Այս, որպէս զի ապացուցանեմ: Երեխայք, ես գնում եմ եկեղեցի. որովհետև ես ուզում եմ մենակ լինել: Եւ եկեղեցուց չեմ դուրս գալ մինչև որ Աստծուց ձեր մօր համար քուն ընդունեմ, քնից յետոյ առողջութիւն. այնպէս, որ նավեր կենայ և կըկին մեր մէջ լրջի:

Մի վախենայք, ես զգում եմ, որ պիտի ստանամ, նա այժմ

այդ ինձ իսկոյն չի տալ, որովհետև այս անդամ ես կասկածեցի. բայց պիտի համբերութեամբ տանեմ և բարի երկիւղալի ծիրոջից յուսալով սպասեմ — մնաք բարև: (Համըուրում է Կլարային. վերջինս անշարժ է: Նորից ոտքի է կանգնում):

Ծնորհակալ եմ երեխաքը, դուք ինձ օգնեցիք աւելի քան կարող էի կարծել, Այժմ ես ինքս կղանգահարեմ և կաղօթեմ: Զանգի առաջին ձայնից իմացած կացէք, որ ես ձեր մօր համար աղօթել սկսեցի: Խաղաղութիւն ձեզ հետ:

Աննա. (Ակամայից դուռը Զանգի առաջ բանում է) այս է—այս է—(սկսում է լաց լինել:

Ելիսա. Ես պիտի տեսնեմ նորան եկեղեցի ներս մտնելիս. պէտք է տեսնեմ: (Շտապով դուրս է գնում):

Ռահիլ. Մայր իմ, մին մայր իմ:

Աննա. Մի խօսիր նորա հետ. մի խօսիր, թէպէտ նաքեզ է նայում:

Ռահիլ. Ինձ երկիւղ է տիրում:

Աննա. Այստեղից ես կարողանում եմ հօրը տեսնել. նա արդէն եկեղեցու մօտ է—արի այստեղ, տես:

Ռահիլ. Ո՞չ ոչ, ես այդ չեմ կարող տանել. սարսափում եմ—մայր. նա ինձ նայում է, բայց չի պատասխանում—մայր:

Աննա. Հանդարտ, Ռահիլ: (Հստում է զանգահարութիմ)

Ռահիլ. (Ընկնում է ծնկների վերայ, նորից վեր կենում եւ խոպոտ ձայնով կանչում). Աստուած իմ, Աննա:

Աննա. Ի՞նչ է պատահել:

Ռահիլ. Մայրս քնած է:

Աննա. Քնած է:

Ռահիլ. Մայրս քնած է:

Աննա. Ճիշտ:

Ռահիլ. Ես պիտի էլիսաին փնտրեմ, նորան տօեմ: (դուրս է գնում):

Աննա. Քնած է որպէս երեխայ, երեխայ. օհ իմ Աստուած (չոքում է):

(Հստում է տեսող, ուժեղ, աւելի ուժեղ, հետզհետէ երկիւղալի որոտում, դրսում աղաղակ, տունը շարժում է, աղաղակը զագամնակէտին է համնում):

Ռահիլ. (դրսից) Սարը քանդուում է (աղաղակելով եւ

շտապով ներս է մննում) սարը փուլ է գալիս եկեղեցու վերայ, մեզ վերայ. ուղիղ եկեղեցու վերայ. մեր հօր վերայ. մեզ վերայ. նա շրջում է, ծխում է, բոլորովին խաւարում է, օհ (ընկնում է յատակի վերայ եւ շուր գալիս):

Էլիսա (դրսից) Հայր, հայր իմ—օհ:

Աննա (Քրոջ անկողնի վերայ ընկնելով) Այժմ գալիս է, գալիս: (Աղաղակը իւր զազաթնակէտին է հասնում յետոյ կրկին նորից սկսում է հետզհետէ դադարել, որի ժամանակ դեռ լսում է զանգի ծայնը):

Աննա. (Վեր թոշելով) Իեռ զանգահարում է. նա կենդանի է:

Ռահիլ. Կենդանի է: Էլիսա (դրսից) հայրս կենդանի է. (աւելի մօտից) եկեղեցին դեռ կանգուն է. (Ներսում) եկեղեցին կանգուն է: Հայրս կենդանի է. հեղեղը եկեղեցուն բոլորովին մօտ իւր հոսանքը դէպի ձախ փոխեց: Նա կենդանի է. զանգահարում է. օհ: Աստուած իմ (նա չոքում է մօր անկողնի մօտ եւ յենուում):

Ռահիլ. (Գալիս է) Էլիսա—մայրիկը:—Աննա. Քնած է: Էլիսա. (Վեր թոշելով) Քնած է:

Ռահիլ. Այո, քնած է: (Զանգակի ծայնը դեռ լսում է):

Աննա. Նա քնած է. բոլորովին հանգիստ:

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ Ր)

բարգմ. զերմ. ՆԵՐՍԻՍ ՏԵՐ-ՅՈՎ. ՀԱՆԴԻՍԵՍՆ

(Վերջը միւս անգամ)